



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«18» մարտի 2024 թվականի N 330-Ա

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1.«ԳՎԳ» ԻՆՇԻՆԵՐԻՆԳ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, տնօրեն՝ Անահիտ Բաղայան, տալ գազատարի կառուցման շինարարության թույլտվություն Զրվեժ համայնքի վարչական տարածքով անցնող՝ Երևան քաղաքի Նոր-Նորք և Նորք Մարաշ վարչական շրջանների մի շարք փողոցների գազաֆիկացումն ապահովելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «ԳՎԳ» ԻՆՇԻՆԵՐԻՆԳ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Անահիտ Բաղայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 18  
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» մարտի 2024 թվականի N 331-Ա

ՄԽԻԹԱՐ ՀԱՅԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ  
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Մխիթար Հայկի Օհանյանը՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի մարտի 5-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2024 թվականի մարտի 19-ին տրված N 136764196141113132 և փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ Մխիթար Օհանյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է Ջրվեժ համայնքի Ձուվք գյուղում հաշվառված OPEL VECTRA 1.6 մակնիշի, 34RV220 պետհամարնիշի փոխադրամիջոցի 2017-2023 թվականների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Մխիթար Հայկի Օհանյանի նկատմամբ 2024 թվականի մարտի 5-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

4.Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Մխիթար Հայկի Օհանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 19  
գ. Ջրվեժ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» մարտի 2024 թվականի N 332-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Գեղամ Օնիկի Արտեմյանի (ծնված՝ 1962 թվականի ապրիլի 13-ին), Աննան Գեղամի Արտեմյանի (ծնված՝ 1967 թվականի մայիսի 10-ին) և Օնիկ Գեղամի Արտեմյանի (ծնված՝ 1986 թվականի դեկտեմբերի 11-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 9 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022024-07-0038 վկայական, տրված 2024 թվականի փետրվարի 16-ին, անհատ ձեռնարկատեր Սարգիս Ռոբերտի Թամազյանի կողմից 2023 թվականի նոյեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնական կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023BBUHTG, մուտքագրված 2023 թվականի դեկտեմբերի 18-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Սարգիս Ռոբերտի Թամազյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գեղամ Օնիկի Արտեմյանին, Աննան Գեղամի Արտեմյանին և Օնիկ Գեղամի Արտեմյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 9 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2003 թվականին ինքնական կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 162,39 քառ.մետր, թիվ 2 ավտոտնակը՝ 44,51 քառ.մետր, թիվ 3 հավաքունը՝ 24,47 քառ.մետր, թիվ 4 զուգարանը՝ 1, 96 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 2,66 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գեղամ Օնիկի Արտեմյանին, Աննան Գեղամի Արտեմյանին և Օնիկ Գեղամի Արտեմյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 9 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնական շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Գեղամ Օնիկի Արտեմյանին, Աննան Գեղամի Արտեմյանին և Օնիկ Գեղամի Արտեմյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 9 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2003 թվականին ինքնական կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 162,39 քառ.մետր, թիվ 2

ավտոտնակը՝ 44,51 քառ.մետր, թիվ 3 հավաքունը՝ 24,47 քառ.մետր, թիվ 4 զուգարանը՝ 1,96 քառ.մետր և թիվ 5 պարիսպը՝ 2,66 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 662 200 (վեց հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գեղամ Օնիկի Արտեմյանին, Աննան Գեղամի Արտեմյանին և Օնիկ Գեղամի Արտեմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 20  
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«20» մարտի 2024 թվականի N 333-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանի (ծնված՝ 1960 թվականի ապրիլի 28-ին) լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Պրոշի Դովլաթյանի (ծնված՝ 1955 թվականի սեպտեմբերի 14-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 5 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1810498 վկայական, տրված 2003 թվականի նոյեմբերի 14-ին, «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառուցյը Կադաստրի կրմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024ECBTTL, մուտքագրված 2024 թվականի հունվարի 3-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 5 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2004 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 189,3 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 14,0 քառ.մետր, թիվ 3, թիվ 6 ծածկերը՝ ընդհանուր 9,8 քառ.մետր, թիվ 4 սանհանգույցը՝ 2,2 քառ.մետր, թիվ 5 աստիճանները՝ 0,7 քառ.մետր, թիվ 6 պարիսպը՝ 4,9 քառ.մետր և թիվ 7 հենապատը՝ 10,8 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 5 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 5 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 146-րդ թաղամաս, թիվ 5:

2. Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 146-րդ թաղամասի թիվ 5 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2004 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 189,3 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 14,0 քառ.մետր, թիվ 3, թիվ 6 ծածկերը՝ ընդհանուր 9,8 քառ.մետր, թիվ 4 սանհանգույցը՝ 2,2 քառ.մետր, թիվ 5 աստիճանները՝ 0,7 քառ.մետր, թիվ 6 պարիսպը՝ 4,9 քառ.մետր և թիվ 7 հենապատը՝ 10,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 422 824 (չորս հարյուր քսաներկու հազար ութ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառուցյի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 20

գ. Ջրվեժ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«20» մարտի 2024 թվականի N 334-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՎԵՐԱՀԱՍՅԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանի (ծնված՝ 1960 թվականի ապրիլի 28-ին) լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Պրոշի Դովլաթյանի (ծնված՝ 1955 թվականի սեպտեմբերի 14-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 6 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1810494 վկայական, տրված 2003 թվականի նոյեմբերի 14-ին, «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառուցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024AXZ2PB, մուտքագրված 2024 թվականի դեկտեմբերի 3-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2004 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 լողավազանը՝ 15,90 քառ.մետր, թիվ 2, թիվ 3 աստիճանները՝ 4,2 քառ.մետր, թիվ 4 հենապատը՝ 17,2 քառ.մետր և թիվ պարիսպը՝ 7,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուրի 2-րդ այգեգործական զանգվածի 29-րդ թաղամասի թիվ 6 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 146-րդ թաղամաս, թիվ 6:

2.Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 146-րդ թաղամասի թիվ 6 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2004 թվականին ինքնական կառուցված թիվ 1 լողավազանը՝ 15,90 քառ.մետր, թիվ 2, թիվ 3 աստիճանները՝ 4,2 քառ.մետր, թիվ 4 հենապատը՝ 17,2 քառ.մետր և թիվ պարիսպը՝ 7,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 52 337 (հիսուներկու հազար երեք հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառուցյի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուզաննա Գեորգիի Դովլաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 20

գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 335-Ա

ՌՈՒՇԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՍՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 11 տան բնակիչ Ռուշան Գուրգենի Ասրյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 4 անձից, ինքը և կինը՝ Հռիփսիմե Մարգարյանու Պողոսյանը, չեն աշխատում, Ռուշան Ասրյանն ունի լուրջ առողջական խնդիրներ, տարել է սրտամկանի ինֆարկտ, այժմ գտնվում է բժիշկների հսկողության տակ, նրանց խնամքի տակ են չափահաս դուստրը՝ Գրետա Ռուշանի Ասրյանը, ծնված՝ 2000 թվականին, ով մանկուց հաշմանդամ է և որդին՝ Ռոման Ռուշանի Ասրյանը, ծնված՝ 2004 թվականին, ով ունի մտավոր զարգացման խնդիրներ և ընտանիքի ֆինանսական վիճակից ելնելով Ռուշան Գուրգենի Ասրյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, **որոշում եմ**.

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ռուշան Գուրգենի Ասրյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուշան Գուրգենի Ասրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 21  
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 336-Ա

ԼՈՒՍԻԱ ԱՂԱՍԻԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Զրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 12-րդ փողոցի թիվ 17 տան բնակիչ Լուսիա Աղասիի Սուքիասյանի վերաբերյալ, այն է՝ Լուսիա Աղասիի Սուքիասյանը ներկայումս բնակվում է ընտանիքի մեկ անձով, հանդիսանում է կենսաթոշակառու, ունի առողջական խնդիրներ և ֆինանսական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, **որոշում եմ**.

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Լուսիա Աղասիի Սուքիասյանին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լուսիա Աղասիի Սուքիասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 21  
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 337-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արթուր Ռաֆիկի Սարգսյանի (ծնված՝ 1965 թվականի հուլիսի 9-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 17/1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26032019-07-0019 վկայական, տրված 2019 թվականի մարտի 26-ին, «Ստեփրիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի նոյեմբերի 22-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառուցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023WZX3YZ, մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 23-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Ստեփրիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արթուր Ռաֆիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 17/1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 5 պահեստը՝ 41,2 քառ.մետր, թիվ 6 ծածկը՝ 29,6 քառ.մետր և թիվ 7 օժանդակ շինությունը՝ 14,6 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արթուր Ռաֆիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 17/1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Արթուր Ռաֆիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 17/1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցված թիվ 5 պահեստը՝ 41,2 քառ.մետր, թիվ 6 ծածկը՝ 29,6 քառ.մետր և թիվ 7 օժանդակ շինությունը՝ 14,6 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 410 689 (չորս հարյուր տասը հազար վեց հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Ռաֆիկի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2024 թ. մարտի 21  
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 338-Ա

ՍԵՅՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՔԵՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի՝ 2024 թվականի մարտի 21-ի զեկուցագիրը՝ Սեյրան Հովհաննեսի Քեյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Զրվեժ համայնքի, Զրվեժ գյուղում հաշվառված՝ MERCEDES-BENZ E 430 մակնիշի, 36ND425 պետհամարանիշով և HYUNDAI SONATA 2.4 մակնիշի, 35QQ107 պետհամարանիշի փոխադրամիջոցների գույքահարկի 2019-2023 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 958 765 (ինը հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր վաթսուհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 791 400 (յոթ հարյուր ինսունմեկ հազար չորս հարյուր) դրամ ապառք, 167 365 (մեկ հարյուր վաթսույոթ հազար երեք հարյուր վաթսուհինգ) դրամ տույժ, որոշում եմ.

1. Սեյրան Հովհաննեսի Քեյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2024 թվականի ապրիլի 22-ին, ժամը 16:00-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Սեյրան Հովհաննեսի Քեյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 21  
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 339-Ա

ՀՐԱՉՅԱ ՌՈՒԲԵՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի՝ 2024 թվականի մարտի 21-ի զեկուցագիրը՝ Հրաչյա Ռուբենի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Զրվեժ համայնքի, Զրվեժ գյուղում հաշվառված՝ VOLVO S80 2.4 մակնիշի, 75KK757 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2022-2023 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 123 917 (մեկ հարյուր քսաներեք հազար ինը հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 111 560 (մեկ հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր վաթսուն) դրամ ապառք, 12 357 (տասներկու հազար երեք հարյուր հիսունյոթ) դրամ տույժ, որոշում եմ.

- Հրաչյա Ռուբենի Թադևոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
- Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2024 թվականի ապրիլի 22-ին, ժամը 16:20-ին:
- Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Հրաչյա Ռուբենի Թադևոսյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 21  
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 340-Ա

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի՝ 2024 թվականի մարտի 21-ի զեկուցագիրը՝ Արամ Սարգսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Ջրվեժ համայնքի, Ջրվեժ գյուղում հաշվառված՝ MERCEDES-BENZ E 280 մակնիշի, 77ՍՍ557 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի 2021-2023 թվականների համար չկատարած պարտավորության վերաբերյալ, այն է՝ 177 927 (մեկ հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 151 350 (մեկ հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ ապառք, 26 577 (քսանվեց հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) դրամ տույժ, որոշում եմ.

1. Արամ Սարգսի Գասպարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2024 թվականի ապրիլի 22-ին, ժամը 16:30-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Արամ Սարգսի Գասպարյանին:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. մարտի 21  
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մեյքոնյան փողոց 76  
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2024 թվականի N 341-Ա

ՍՈՆԱ ՌԱԶՄԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

